Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

Համակարգային վերլուծություն
2009-2011

Երևան- 2012

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամը շնորհակալություն է հայտնում և բարձր է գնահատում Հայաստանում մասնագիտական ուսումնական հաստատությունների ներդրումը ՀՀ մասնագիտական կրթության համակարգի 2009-2011թթ. ամբողջական վերլուծության իրականացման գործընթացում: Մասնավորապես, աջակցությունը դրսևորվել է ՈԱԱԿ-ի մշակումների վերաբերյալ ակտիվ հետադարձ կապի ապահովմամբ և որակի ներքին ապահովման առկա իրավիճակի, ինչպես նաև փորձնական ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների մասին հարցմանը մուտքերի մասնակցությամբ:

ՈԱԱԿ-ը առանձնահատուկ շնորհակալություն է հայտնում միջազգային փորձագետներին Համաշխարհային բանկի և Տեմպուս ծրագրերի շրջանակներում իրականացված փորձնական ծրագրային և ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներում իրենց ներդրումն ունենալու և Հայաստանի մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման համակարգի ձևավորման գործընթացին շարունակաբար ցուցաբերած աջակցության համար:

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանը միացել է Բոլոնիայի գործընթացին 2005 թվականին Բերգենում կնքված կոմյունիկեի արդյունքում (Բերգենյան կոմյունիկե): Նույն 2005թ-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացումից հետո քայլեր են ձեռնարկվել՝ իրականացնելու Բոլոնիայի գործընթացի սկզբունքները Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքին (այսուհետ՝ ԵԲԿՏ) ինտեգրվելու նպատակով: Այդ առումով հիմնական ձեռքբերումներից մեկը եղել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) ստեղծումը 2009թ. նոյեմբերին:

Սա ՈԱԱԿ-ի հրատարակած մասնագիտական կրթության համակարգի ամբողջական վերլուծության վերաբերյալ առաջին զեկույցն է և բավարարում է ԵԲԿՏ-ի «Որակի ապահովման ուղենիշներ և չափորոշիչներ» փաստաթղթի 2.8 չափորոշչին, որը սահմանում է. «Որակի ապահովման գործակալությունները պետք է ժամանակ առ ժամանակ ներկայացնեն ամփոփ հաշվետվություններ, որոնք կնկարագրեն և կվերլուծեն իրենց կողմից իրականացված փորձարկումների, գնահատումների և այլ ուսումնասիրությունների ընդհանուր արդյունքները» (էջ 22):

Այսպիսով, հետևելով ուղենիշներին և չափանիշներին, իր չորսմայա գործունեության ընթացքում ՈԱԱԿ-ը հավաքել է տեղեկատվություն ՀՀ-ում գործող մասնագիտական ուսումնական հաստատությունների և առանձին մասնագիտական ուսումնական ծրագրերի վերաբերյալ, որպեսզի կարողանա իրականացնել Հայաստանի մասնագիտական կրթության համակարգի խորքային վերլուծություն: Վերլուծությունները արտացոլում են հիմնավոր տեղեկատվություն մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգում առկա զարգացումների, միտումների, լավ փորձի, բարդությունների և թույլ կողմերի վերաբերյալ, որոնց հիման վրա կարելի է անել առաջարկություններ կրթության քաղաքականության մշակման և որակի բարելավման ուղղությամբ:

Այս զեկույցում ներկայացված արդյունքները հանգեցնում են մեկ հիմնական եզրակացության. կրթության համակարգում առկա են կարողունակ մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև ազգային և միջազգային մակարդակներում հայտնի մասնագետներ: Հիմնականում մասնագիտական կրթության համակարգում բացակայում է հետևողական և համակարգային մոտեցումը բարեփոխումների իրականացմանը, ինչը, փաստորեն, բերում է համակարգի մասնատմանը: Այսպիսով, անհրաժեշտ է զարգացնել առկա կարողությունները՝ համակարգի մասնատումից խուսափելու և կառավարման և ղեկավարման առավել օպտիմալ մոտեցումներ ձևավորելու համար:

ՈԱԱԿ-ը հույս է տածում, որ մասնագիտական ուսումնական հաստատությունները, ղեկավարությունը, ուսանողները և, առհասարակ, հասարակությունը կողջունեն այս զեկույցը և կընդունեն առաջարկվող խորհուրդները՝ ՀՀ մասնագիտական կրթության համակարգի բարելավման նպատակով:

I. ՆԱԽԱԲԱՆ

Մասնագիտական կրթությունը երկրի բարեկեցության հիմնական գրավականն է, որը բավարարում է մի շարք կարևոր կրթական, տնտեսական և սոցիալական կարիքներ: Հաշվի առնելով կրթության կարևոր դերակատարումը երկրի զարգացման և միջազգային մակարդակում տեսանելիության հարցում, ինչպես նաև աջակցությունը, որ այն ստանում է պետական և մասնավոր սեկտորներից, այս ամենը առավել շոշափելի է դարձնում ոլորտում հաշվետվողականության մեծացման անհրաժեշտությունը: Ըստ այդմ, տարբեր շահակիցներ համակարգի կատարողականը դիտարկում են տարբեր տեսանկյուններից՝ հաշվի առնելով իրենց հետապնդած նպատակը: Միջազգային գործընկերները, կազմակերպություններն ու գործատուները փնտրում են հավաստի տեղեկատվություն որակավորումների և ընդհանուր համակարգի կատարողականի վերաբերյալ՝ վերջինների ճանաչման նպատակով: ՀՀ կառավարությունը և կրթության քաղաքականության մշակողները պահանջում են մասնագիտական կրթության որակի ապահովմանն, արդյունավետությանը, արտադրողականությանն ու ծախսարդյունավետությանն ուղղված միջոցառումներ՝ որոշումների կայացման հիմնավոր, ինչպես նաև պլանավորման և ռեսուրսների բաշխման արդյունավետ գործընթացներ ապահովելու նպատակով: Նմանապես, ուսանողները, նրանց ծնողները և աշխատաշուկան փնտրում են առավել ծավալուն և վստահելի տեղեկատվություն առկա բարձրագույն կրթության հնարավորությունների որակի մասին:

Այսպիսով, որակի ապահովման տեսանկյունից մասնագիտական կրթության համակարգի առաջին ամբողջական վերլուծությունը, կատարում է մի քանի կանոր գարծառույթներ.

- արտացոլել Հայաստանի մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման առկա վիճակը,
- բավարարել ՀՀ Կառավարության հետաքրքրությունը՝ մասնագիտական կրթության որակի և որակի ապահովման առկա վիճակի հետ կապված՝ որպես մասնագիտական կրթության համակարգային բարեփոխումների մաս:
- արձագանքել Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում Որակի ապահովման չափորոշիչներին և ուղենիշներին (ESG 2.8), և
- ներկայացնել կրթության պլանավորման և կառավարման ուղղությամբ առաջարկություններ:

Մասնագիտական կրթության համակարգի ամբողջական վերլուծության իրականացումը նախաձեռնվել է 2011թ.-ի սեպտեմբերին և ներառում է ՀՀ-ում որակի ապահովման երեք հիմնական ուղղություն՝

- Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովումը,
- որակի արտաքին ապահովումը,
- դասավանդման և ուսումնառության գործընթացների որակի ապահովումը:

Հետևաբար, այս զեկույցում ներկայացված են մարտահրավերներ և խորհրդատվություններ որակի ապահովման միայն այս երեք տիրույթների համար:

- Վերլուծության համար նախնական տվյալները վերցված են բազմաթիվ աղբյուրներից՝
- ՈԱԱԿ-ի՝ մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալների բազա և վերջինում ընդգրկված փաստաթղթերի համապատասխան ուսումնասիրություններ,
- վերջին երկու տարիների ընթացքում իրականացված և՛ ինստիտուցիոնալ, և՛ ծրագրային տասնհինգ փորձնական հավատարմագրում, և մուհերի կողմից իրականացվող հաջորդական քայլեր,
- հարցում ուղղված մասնագիտական ուսումնական հաստատություններին ՝ ընդհանուր որակի ապահովման առկա վիճակի, մասնավորապես՝ դասավանդման և ուսումնառության որակի վերաբերյալ,
- Մասնագիտական ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի հետ ֆոկուս խմբային քննարկումներ հետազոտությամբ ստացված տվյալների ստուգման, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության որակի ապահովման վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով,
- Համաշխարհային բանկի և Տեմպուս ծրագրերի շրջանակներում համակարգի մշակման և փորձարկման մեջ ընդգրկված միջազգային փորձագետների հետադարձ կապ,
- 2011-2012թթ. «Ուսանողության ձայն»-ի նախաձեռնությամբ իրականացված ուսանողների հարցում, որն, ընդհանուր առմամբ, արտացոլում է ուսանողների կարծիքը ուսումնառության և դասավանդման գործընթացների, և, մասնավորապես, ուսանողների գնահատման, Կրեդիտային փոխանցման և կուտակման եվրոպական

համակարգի (ECTS) և, դասավանդման ու ուսումնառության մեթոդների մասին:

Այս հաշվետվությունում ներկայացված առաջարկությունները հիմնված են հարցման հիմնական արդյունքների վրա և ուղղված են համակարգում առկա կոմպետենցիաների կայուն զարգացմանը, մասնագիտական ուսումնական հաստատություններում քաղաքականության մշակման գործընթացի բարելավմանը, ինչպես նաև նպաստելու համակարգի համախմբվածությանը, ինչը, ի վերջո, կհանգեցնի սոցիալական համախմբվածության:

1. Մասնագիտական կրթության համակարգը. հիմնական տվյալներ

Մասնագիտական կրթության համակարգը Հայաստանում ներառում է պետական, ոչ պետական և միջպետական ուսումնական հաստատությունները: Դրա մաս են կազմում բոլոր այն մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք պատրաստում են ուսանողներին աշխատանքային և հետզոտական գործունեություն ծավալելու համար: Մասնագիտական կրթության համակարգը ներառում է բարձրագույն կրթությունը և միջին մասնագիտական կրթությունը: Այսպիսով, բարձրագույն կրթությունն իրականացվում է երկու հիմնական տեսակի հաստատություններում՝ համալսարաններում և այլ հաստատություններում, ինչպես օրինակ՝ ինստիտուտները, ակադեմիաները, հիմնադրամները և կոնսերվատորիան, մինչդեռ միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է քոլեջներում և արհեստագործական ուսումնարաններում:

Աղյուսակ 1. Բարձրագույն ուսումնական հաստատությունները և ուսանողները

	Պետական		Ոչ պետական		Միջպետական	
	Համալսարան	Այլ հաստատություններ	Համալսարան	Այլ հաստատություններ	Համալսարան	Այլ հաստատություններ
ԲԿ համակարգ	12	10	26	14	3	1
Ուսանողների թիվը	մոտ 95000		մոտ 20000		մոտ 8700	

Աղյուսակ 2. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները և ուսանողները

	Պետական		Ոչ պետական		Միջպետական	
	Քոլեջներ	Տեխնիկումներ	Քոլեջներ	Տեխնիկումներ	Քոլեջներ	Տեխնիկումներ
ՄՄԿՈՒ համակարգ	73	25	18	N/A	N/A	N/A
Ուսանողների թիվը	մոտ 29207	մոտ5614	մոտ 1826	N/A	N/A	N/A

2011 թ. ՀՀ կառավարությունն ընդունեց ՀՀ որակավորումների ազգային շրջանակը (այսուհետ՝ ՈԱՇ), որը բաղկացած է 8 մակարդակից: Այժմ ՈԱԱՇ-ի կիրառումն ու պահպանումը ՀՀ Կրթության և գիտության նախարարության իրավասությունն է:

Ըստ ՈԱՇ-ի, Հայաստանում բարձրագույն կրթության համակարգն ունի միասնական բնույթ, ինչը ենթադրում է մասնագիտական և հետազոտական ծրագրերի ինտեգրումը՝ հաշվի առնելով շնորհվող որակավորումները, հորիզոնական կամ ուղղահայաց շարժունությունը և հաստատությունների տեսակները: Ոչ պետական համալսարանները և այլ ոչ պետական բուհերը, բացառությամբ մի քանի առաջատար ոչ պետական հաստատությունների, առաջարկում են հիմնականում բակալավրի կրթական ծրագրեր, մինչդեռ պետականներն առաջարկում են բակալավրի, մագիստրոսի և գիտահետազոտական ծրագրեր: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները հիմնականում առաջարկում են ծրագրեր, որոնք համահունչ են ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին:

2. Հավատարմագրման առաջին փորձերը (1999-2007)

Հավատարմագրման համակարգի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում կարելի է բաժանել երկու մեծ շրջանի՝ նախքան Բոլոնյան հռչակագրի ընդունումը 2005 թվականին և դրանից հետո: Առաջին շրջանը սկսվել է 1999 թվականին՝ Կրթության և Գիտության նախարարության կառուցվածքում ստեղծելով մի ստորաբաժանում, որը սկսեց հավատարմագրման գործընթացը: Քանի դեռ հավատարմագրման գործընթացը պարտադիր էր պետական բուհերի համար, ոչ պետական

համալսարանները կարող էին դիմել կամավորության սկզբունքով: Հաշվի առնելով հավատարմագրման գործընթացի բնույթը և անկնկալվող արդյունքը՝ պետական դիպլոմ տալու իրավասության շնորհումը՝ պետական բուհերից և ոչ մեկը չդիմեց հավատարմագրման համար, քանի որ նրանք արդեն իսկ ունեին այդ լիազորությունը: Իսկ ինչպիսի՞ն էր պատկերը ոչ պետական բուհերի շրջանում. ուսանողներ գտնելու և իրենց տեղը աշխատաշուկայում և կրթական դաշտում հաստատելու նպատակով գրեթե բոլորը դիմեցին հավատարմագրման համար և 45-ը հավատարմագրվեցին մինչ 2007 թվականը: Հավատարմագրման և լիցենզավորման չափանիշները նույնն էին. եթե կրթական ծրագրերի 65%-ը հավատարմագրվում էր, համալսարանը համարվում էր հավատարմագրված: Շնորհված հավատարմագրվածի կարգավիճակն ուներ մշտական բնույթ, և չէր գործում շրջափուլային մոտեցում հավատարմագրման գործընթացին: Ավելին, հաճախ հավատարմագրումը իրականացվում էր բուհի՝ դատարան հայց ներկայացնելու միջոցով:

Հավատարմագրման առաջին փորձերը կարելի է համարել մասամբ հաջողված, քանի որ այն չկարողացավ ներգրավել պետական բուհերին, որոնք, համաձայն Կրթության մասին օրենքի (1999), պետք է անցնեին հավատարմագրման գործընթաց: Ավելին, հավատարմագրման ոչ շրջափուլային մոտեցման հետևանքով ոչ պետական բուհերը, որոնք անցել էին հավատարմագրում, դադարեցրեցին համալսարանի որակի ապահովման համակարգերի մշակման և բարելավման գործընթացները, ինչը կապահովեր ստույգ և օբյեկտիվ տեղեկատվություն հետագայում որոշումների կայացման և բուհի արդյունավետ կառավարման համար: Այսպիսով, առաջին փորձը ցույց տվեց, որ պետք է ստեղծել առավել վստահելի և արդյունավետ համակարգ:

II. Որակի արտաքին ապահովման առկա վիճակը

1. Նախապատմությունը

2005 թվականին Բոլոնյայի հռչակագրի ստորագրումից հետո Հայաստանի մասնագիտական կրթության համակարգը, և մասնավորապես, բարձրագույն կրթության համակարգը թևակոխեց բարեփոխումների և ձգտումների նոր շրջափուլ: Առաջին ձեռքբերումներից էր մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն ստեղծելը, որը կհամապատասխաներ Եվրոպական ուղենիշներին և չափորոշիչներին՝ այսպիսով խթանելով ՀՀ մասնագիտական կրթության համակարգում շնորհված որակավորումների ճանաչմանը:
ՈԱԱԿ-ը, հիմնադրվելով 2008 թվականի նոյեմբերին, սկսեց իր պաշտոնական գործունեությունը 2009 թվականի մարտին՝ Հոգաբարձուների Խորհրդի կողմից տնօրեն ընտրելուց հետո: ՈԱԱԿ-ի վերջին 4 տարիների գործունեությունն ուղղված է Որակի արտաքին ապահովման համակարգի մշակմանը՝ համապատասխան ՈԱԵՉՈՒ-ի պահանջներին, և գործարկմանը: ՈԱԱԿ-ը գործունեություն է ծավալել հետևյալ հիմնական բանագավառների շուրջ.

- Որակի արտաքին ապահովման համակարգի շրջանակի ձևավորում և գործարկում;
  - Կանոնակարգող փաստաթղթերի մշակում, ներառյալ՝
    - Որակի ապահովման շրջանակ, որը ներառում է պարտադիր ինստիտուցիոնալ հավատարմագրում և կամավորության սկզբունքով իրականացվող ծրագրային հավատարմագրում; Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշներ և չափորոշիչներ;
      Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման ընթացակարգեր;
  - 11 Ինստիտուցիոնալ և 4 ծրագրային փորձնական հավատարմագրման իրականացում;
- Մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղեցույց;
  - Վերապատրաստումների և խորհրդատվության տրամադրում;
  - Աշխատաժողովների և կլոր սեղանի շուրջ քննարկումների կազմակերպում;
- ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման համակարգի ձևավորում;

- ՈԱԱԿ-ի միջազգայնացում
  - Ակտիվ մասնակցություն Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) և Որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE) միջոցառումներին;
  - Համաշխարհային Բանկի ծրագրերի իրականացում
  - Մասնակցություն Tempus ծրագրերի. DIUS և PICQA ծրագրերը նպատակաուղղված են որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերի ներդրմանը բարձրագույն ուսումնական հաստատություններում:

2. Որակի արտաքին ապահովման շրջանակի հաստատումը և գործարկումը

ՈԱԱԿ-ը, հիմնադրման օրվանից, իրականացրել է կարիքների ամբողջական վերլուծություն՝ հետազոտելով ՀՀ պետական և ոչ պետական բուհերում կառավարման գործընթացը ինտիտուցիոնալ և ՄԿԾ մակարդակներում՝ և փորձել է բացահայտել այն գործոնները, որոնք ընդհանուր առմամբ խոչընդոտում կամ խթանում են բարեփոխումներին՝ մասնավորապես կրթության որակի ապահովմանը: Հիմնվելով ուսումնասիրության արդյունքների վրա՝ փորձ արվեց վերաձևակերպել Որակի ապահովման եվրոպական ուղենիշներն ու չափորոշիչները՝ ազգային մակարդակում կրթական պահանջները բավարարելու նպատակով: Նոր մշակված որակի ապահովման չափանիշները և չափորոշիչները դրվեցին ինքնավերլուծության մոտեցման հիմքում՝ նպատակ ունենալով բավարարել ազգային և միջազգային պահանջները: Հավաստելու համար, որ ինքնավերլուծության հիմքում ընկած չափանիշները և չափորոշիչները, գնահատման մեթոդները, գործիքները և մեխանիզմները օրինական են և բխում են կրթության համակարգի կարիքներից, պետական և ոչ պետական 15 բուհեր ներգրավվեցին մշակված ընթացակարգերի, չափանիշների և չափորոշիչների փորձարկման գործընթացում, որոնք ուղղված էին հաստատությունների և ՄԿԾ-ների հնարավորությունների բացահայտմանը: Փորձարկումը ներառում էր հետևյալ փուլերը՝ բուհի կողմից դիմում-հայտի ներկայացում, կրթական ծրագրերի և համալսարանների ինքնավերլուծություն, նախնական գնահատում, փորձագիտական այց և զեկույցի պատրաստում:

Ինքնավերլուծության ձևաչափը իր մեջ ներառում է ՈԱԵՉՈՒ-ի 7 չափորոշիչ, որոնք բացահայտում են ՀՀ կառավարության կողմից հաստատված հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների հիմքում ընկած փիլիսոփայությունը և յուրաքանչյուրի բավարարման մեխանիզմները: Հարցերի, քննարկումների և աշխատաժողովների միջոցով փորձարկման մասնակիցներին ուղղություն էր տրվում, թե ինչու և ինչպես է կարելի իրականացնել ինքնավերլուծությունը՝ փորձելով ավելի խորքային ուսումնասիրել իրենց կառավարման, դասավանդման և ուսումնառության մակարդակները: Ներգրավելով հիմնական շահակիցներին մշակված քաղաքականության և ընթացակարգերի կատարելագործման գործում՝ առաջնային են դառնում հետևյալ երկու խնդիրները. մշակված և հաստատված փաստաթղթերի օրինականությունը և շահակիցների միջև ակտիվ երկխոսությունը:

3. Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղեցույց

Իրականացված 15 փորձնական հավատարմագրման արդյունքների վերլուծության ամփոփումից դուրս բերվեցին է հետևյալ հիմնական փաստերը ՈԱԱԿ-ի գործունեության արդյունավետության վերաբերյալ. ՈԱԱԿ-ի որակի ապահովման մոտեցումները դրականորեն են ազդել որակի ապահովման ուղղությամբ մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության վրա:

Փաստ. ՈԱԱԿ-ի որակի ապահովման մոտեցումները դրականորեն են ազդել որակի ապահովման ուղղությամբ մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության վրա:

Խորհրդատվություն. Աջակցել ՄՈՒՀ-երին իրենց որակի ապահովման համակարգի ներդրման գործում և փոխել ինստիտուցիոնալ կառավարման մոտեցումները՝ այսպիսով

Ընդհանուր առմամբ, հարցման մասնակիցները գտնում են, որ ՈԱԱԿ-ի մոտեցումները առաջացրել են որոշակի փոփոխությունների իրենց ուսումնական հաստատություններում, և վերջինները տանում են դեպի բարելավում և զարգացում: Բաց հարցերը ցույց տվեցին, որ հարցվածների 80.37%-ը (158 հարցվածներից 127-ը) համարում է, որ ՈԱԱԿ-ի որակի ապահովման մոտեցումներին ծանոթանալուց հետո համալսարանները վերանայում են իրենց կառավարման մոտեցումները և հակված են մշակելու անհրաժեշտ փաստաթղթերը, ընթացակարգերը, մեխանիզմները և գործիքները, որոնք բացակայում էին նախկինում:

Վարչական աշխատակից. «Սա շատ արդյունավետ գործընթաց էր… Մենք սկսեցին հասկանալ բուհերի կառավարման հիմքում ընկած մեխանիզմները… Գործընթացի արդյունքում մենք մշակեցինք մեր փաստաթղթերի 50%-ը՝ դարձնելով դրանք կիրառելի»:

ՈԱ պատասխանատու. «Սա բարդ գործընթաց է, բայց դրա արդյունքում շատ բան ես սովորում»:

Այսպիսի արդյունքները ապացուցում են, որ ՈԱԱԿ-ի մոտեցումները բավարարում են համակարգի պահանջները, և առաջիկա տարիներին պետք է կատարել բարելավումներ, որոնք կբերեն աստիճանական վերակառուցման, զարգացման, իսկ հետագայում նաև փոխակերպման:

Փաստ. Անցումային ժամանակաշրջանում բուհերին աջակցություն է անհրաժեշտ:

Խորհրդատվություն. Սահմանել ժամանակահատված, որի ընթացքում ՄՈՒՀ-երը կկարողանան զարգացնել իրենց կարողությունները, վերանայել որակի կառավարման և բարելավման մոտեցումները և, այսպիսով, պատրաստ կլինեն հավատարմագրման նպատակով իրականացվող ստուգումներին:

Հայաստանում, որպես հետխորհրդային երկիր, որակի ապահովման լավագույն մոտեցումը, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության հիմնական արդյունքները, համալսարաններին օժանդակող և զարգացմանը նպաստող ռազմավարությունների ներդրումն է: Հարցվածների 77%-ը արտահայտել են իրենց պատրաստակամությունը և

գիտակցում են անցումային շրջան ապրելու անհրաժեշտությունը, որը նպատակաուղղված է նախապատրաստելու համալսարաններին և ՄԿԾ-երը փորձաքննության և հավատարմագրման գործընթացներին: Ներկա դրությամբ հաստատությունների մեծ մասը պատրաստ է նախապատրաստական փուլ անցնել՝ իրական գործընթացում հաջողելու համար, որի համապատասխան չափանիշներն և չափորոշիչները բխում են ազգային նպատակներից, Որակի ապահովման եվրոպական ուղենիշներից և չափորոշիչներից և մեր պետության միջազգայնացման նպատակներից:

Փաստ. Ստուգումներից սկսելը, որոնք վերահսկման նպատակ են հետապնդում, կարող է խոչընդոտել ուսումնական հաստատություններին՝ զարգացնելու իրենց կարողությունները, և, հետևաբար, գիտելիքահեն հասարակության ձևավորմանը:

Խորհրդատվություն. Հրաժարվել նախկինում կիրառվող վերահսկման մոտեցումից և անցում կատարել որակի ապահովման բարելավման մոտեցմանը:

Մյուս բացահայտումն այն է, որ վերահսկողություն սահմանելու նպատակ հետապնդող ուսումնասիրություններից սկսելը կարող է խոչընդոտել հաստատություններին՝ զարգացնելու իրենց կարողությունները, և, հետևաբար, գիտելիքահեն հասարակության ձևավորմանը:

Այսպիսով, հարցվածների 61%-ը բարելավմանը միտված են համարում այն մեխանիզմները, որոնք ոչ միայն ստուգում են ընթացակարգերը, այլ նաև տրամադրում են համապատասխան ուղղորդում և վերապատրաստում, որոնք նպատակ ունեն զարգացնելու որակի ներքին ապահովման համակարգը և կառավարման նոր մոտեցումների որդեգրումը, ինչը անհրաժեշտ պայման է անցումային շրջանի համար: Ինչ վերաբերում է որակավորումների ճանաչմանը, հարցվածների 87%-ը գտնում է, որ կամավորության սկզբունքով իրականացվող ծրագրային հավատարմագրումը, որը հանգեցնում է որակավորումների և կրեդիտների փոխճանաչմանը, պետական ֆինասավորմանն ու միջազգայնացմանը, նպատակահարմար է ինստիտուցիոնալ մակարդակում որոշակի նախապատրաստական աշխատանքներ կատարելուց հետո միայն: Հարցվածների միայն 23%-ն է նշել, որ իրենց հաստատությունները

պատրաստ են հավատարմագրման առանց որևէ նախապատրաստական աշխատանքի:

Այսպիսով, հաշվի առնելով հետազոտության արդյունքները, որոշվել է հաստատել որակի ապահովման մի շրջանակ, որը կներառի երկու հիմնական գործիք.

- Ինստիտուցիոնալ հավատարմագրում (պարտադիր). խթանել ինստիտուցիոնալ կառավարման նորարական մոտեցումները և զարգացումը, ոչ թե վերահսկել;
- Ծրագրային հավատարմագրում (կամավորության սկզբունքով) . խթանել ՀՀ ՄՈՒՀ-երի կողմից տրված որակավորումների և կրեդիտների ճանաչումը:

Որակի ապահովման համակարգի զարգացման մյուս կարևոր գործոնը մշակութային տարբերությունները հաշվի առնելն էսա վճռորոշ գործոն է որակի ապահովման մոդելի ընտրության հարցում, քանի որ այնպիսի ասպեկտներ, ինչպիսին են ազգային նպատակները, մասնագիտական կրթության նպատակները և իրականացման ձևերը, պետք է հաշվի առնել: Մյուս կողմից հետխորհրդային համատեքստում, որտեղ տարբերությունների պատճառ են հանդիսանում տարաբնույթ համոզմունքները, իրական պատասխանատուների գիտելիքի մակարդակի փոփոխությունը, որակի ապահովման առկա վիճակը և մասնագիտական կրթության որդեգրած նպատակները, որակի ապահովման համակարգը պետք է խթանի կառուցվածքային և վարքագծի փոփոխությունները՝ սահմանելով որպես առաջնային նպատակ, եթե հարցը վերաբերում է կրթական ծառայությունների ճանաչմանն ու միջազգայնացմանը:

Փաստ.

Խորհրդատվություն. որակի ապահովման համակարգը պետք է խթանի կառուցվածքային և վարքագծի փոփոխությունները՝ սահմանելով որպես առաջնային նպատակ, եթե հարցը վերաբերում է կրթական ծառայությունների ճանաչմանն ու միջազգայնացմանը:

Ինչպես ցույց են տալիս ստացված տվյալները, ՈԱԱԿ-ի որակի ապահովման մոտեցումը պատճառ է հանդիսացել, որպեսզի գործընթացի պատասխանատուները փոխեն իրենց դիրքորոշումը որակի ապահովման և, մասնավորապես, հավատարմագրմանը գործընթացների նկատմամբ: Փորձնական հավատարմագրում անցած բուհերը ոչ միայն հաստատում են փոփոխությունների կառավարմանն (change management) ուղղված ամբողջական մոտեցման առկայությունը, այլ նաև տեսել են դրա շոշափելի արդյունքները, որը իր հերթին փոխել է վերջիններիս դիրքորոշումը՝ կապված փոփոխություններ իրականացնելու իրենց կարողության հետ՝ հանդիսանալու փոփոխության անմիջական իրականացնողներ: Զգալով այս կարողության առկայությունը՝ նրանք սկսեցին առաջին մակարդակի փոփոխություններից, որոնք ներառում էին որակի ապահովման գործիքների և մեխանիզմների դերի վերաձևակերպումիցև վերանայումից (անցում պաշտոնական փաստաթղթերից դեպի կիրառելի փաստաթղթերի մշակումը, որը տվեց դրական արդյունքներ): Փորձնական հավատարմագրում անցած հաստատությունները, ըստ էության անցում կատարեցին դեպի երկրոր մանարդակի փոփոխություններ՝ ուղղված վարքագծի փոփոխություններին:

Այնուամենայնիվ, ընդհանուր համակարգի մակարդակում ՄՈՒՀ-երին դեռ անհրաժեշտ է զարգացնել կրթական գործընթացների կառավարման կարողություններ: Իրականում անհրաժեշտ է վերադիտարկել կառավարման մոտեցումները՝ հանգեցնելով համակարգի մշակույթի փոփոխության: Սա պետք է արվի փոփոխության գործընթացում ներգրավված բոլոր դերակատարների համապատասխան գիտելիքների ձևավորման (ի՞նչ պետք է արվի և ինչպե՞ս) և, այնուհետև, ՝փոփոխությունների կառավարման կարողությունների զարգացման միջոցով: Ինչ վերաբերում է որակի ապահովման մոտեցումներին, ուսումնական հաստատությունները պետք է վերահսկենզարգացման և բարելավման գործընթացները և նախատեսեն հիմնական նախապատրաստական փուլ՝ գործընթացում ներգրավվածությունն ապահովելու համար:

Փաստ. ՄՈՒՀ-երում դեռ անհրաժեշտ է զարգացնել կրթական գործընթացների կառավարման կարողությունները:
Խորհրդատվություն. Սա պետք է արվի փոփոխության գործընթացում ներգրավված բոլոր դերակատարների համապատասխան գիտելիքների ձևավորման (ի՞նչ պետք է արվի և ինչպե՞ս) և, այնուհետև, վերջիններիս՝ փոփոխությունների կառավարման կարողությունների զարգացման միջոցով:

Ուսու
ՈԱԱ

գործընթացում , այսպիսով նպաստելով աստիճանական և ներդաշնակ զարգացման և վերափոխման գործընթացներին: Սա հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով այն ազդեցությունը, որը մասնագիտական կրթությունն ունի հասարակական զարգացման վրա, քանի որ որակի մշակույթի ներդրումը մասնագիտական կրթության համակարգում իր արտացոլումը կգտնի և կփոխանցվի հասարակության լայն զանգվածներին:

4. ՈԱԱԿ-ի միջազգայնացում

Հիմնադրման օրվանից ՈԱԱԿ-ը հստակ քայլեր է ձեռնարկել իր գործընթացները միջազգայնացնելու և միջազգային գործակալությունների կողմից ճանաչում ձեռք բերելու ուղղությամբ: ՈԱԱԿ-ի միջազգայնացմանը միտված գործընթացները ներառում էին հետևյալ հիմնական գործընթացները՝

- ակտիվ համագործակցություն եվրոպական և նախկին ԽՍՀՄ-ի այլ գործակալությունների հետ,
- ՈԱԵՉՈՒ-ի (ESG) համապատասխան որակի արտաքին ապահովման համակարգի ձևավորում,
- Ակտիվ մասնակցություն և ներդրում որակի երկխոսության ձևավորմանը՝Որակի ապահովման եվրոպական ցանցի (ENQA) և Բարձրագուն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE) գործընթացներում ներգրավման միջոցով,
- Ակտիվ մասնակցություն Համաշխարհային բանկի և ՏԵՄՊՈՒՍ-ի ծրագրերում:

ՈԱԱԿ-ի մասնակցությունը որակի շուրջ ծավալված երկխոսությանն իրականացվում է որակի ապահովման վերաբերյալ եվրոպական միջոցառումներին մասնակցությամբ, EQAF և INQAAHE համաժողովներին հոդվածներ ներկայացնելով և ENQA-ի աշխատախմբերում մասնակցությամբ: Ներկայումս ՈԱԱԿ-ն ունի նախնական անդամակցության կարգավիճակENQA-ում, INQAAHE լիիրավ անդամ է և ներկայացված է INQAAHE-ի տնօրենների խորհրդում:

ՈԱԱԿ-ը նաև ակտիվորեն իրականացնում է տարբեր ծրագրեր: Ծրագրերի իրականացման մակարդակում ազդեցությունը մասնավորապես շոշափելի է՝ ՈԱԱԿ-ի անձնակազմի մասնագիտացման, մշակված մեխանիզմների

կատարելագործման, որակի արտաքին ապահովման գործիքների մշակման, ինչպես նաև ՄՈՒՀ-երի որակի ապահովման գործընթացներում ներգրաված անձնակազմի մասնագիտական զարգացման գործընթացներում: Բացի այդ, Համաշխարհային բանկի ծրագրերի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվում հետևյալ ուղղություններով՝ ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովման համակարգերի ձևավորում, ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովման անձնակազմերի վերապատրաստումներ , որակի արտաքին ապահովման համակարգի ձևավորում, ինչպես նաև իրականացվում են փորձնական հավատարմագրումներ: Ինչ վերաբերում է ՏԵՄՊՈՒՍ ծրագրերին՝ ներկայումս ՈԱԱԿ-ը ներգրավված է 6 ՏԵՄՊՈՒՍ ծրագրերում, որտեղ հանդես է գալիս որպես առաջատար գործընկեր, իսկ ազգային մակարդակում՝ որպես համակարգող:

Տեմպուս ծրագրերը հիմնականում վերաբերում են Հայաստանի մասնագիտական կրթության համակարգի արդի մարտահրավերներին, այն է՝որակի ներքին և արտաքին ապահովում, վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական պլանների մշակում, համալսարան-աշխատաշուկա համագործակցության ստեղծում, որակավորումների սեկտորիալ շրջանակների մշակում և այլն:

5. ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովումը

Իր արդյունավետ գործունեությունը խթանելու նպատակով ՈԱԱԿ-ը որակի ներքին ապահովման համակարգ ձևավորելու մի քանի փորձ է կատարել: ՈԱԱԿ-ը ընտրել է որակի ներքին ապահովման ներքնից վերև մոտեցումը, որը նպաստում է համակարգի կայացմանը, գործունակությանը և դրական արդյունքների ձեռքբերմանը: Այնուամենայնիվ, ՈԱԱԿ-ի՝ որակի ներքին ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է, և ՈԱԱԿ-ը ինքնավերլուծության իրականացման նախնական փուլում է, որը իրականացվում է Հոլանդիայի և Բելգիայի հավատարմագրման գործակալության (NVAO) աջակցությամբ:ՈԱԱԿ-ը 2014-2015թթ. պլանավորում է դիմել միջազգային ճանաչման համար՝ հավաստելու համապատասխանությունը ESG պահանջներին:

III. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ՄՈՒՀ -ԵՐՈՒՄ

ՄՈՒՀ-երում որակի ներքին ապահովման առկա վիճակը ավելի խորապես հասկանալու համար հետազոտվել են ՄՈՒՀ-երի կառավարման հետևյալ ոլորտները՝

- Որակի ներքին ապահովման առկա վիճակը ՄՈՒՀ-երում
    - Որակի ապահովման՝ առաքելության և փաստերի վրա հիմնված մոտեցումը
- Ռազմավարական պլանավորումը
- Որակի կառավարման կարողությունը:

Ինչպես ցույց տվեցին հետազոտության արդյունքները, ՄՈՒՀ-երում որակի ապահովման համակարգի ներդրման գործընթացները սկսվել են ավելի վաղ, քան 2005թ.-ին ՀՀ կառավարության կողմից Բոլոնիայի հռչակագրի տեղայնացումը: Այնուամենայնիվ, որակի ապահովման համակարգի ներդրման նոր և ավելի մեծ ալիք բարձրացավ 2005թ.-ից հետո, որը պայմանավորված էր 2008թ.-ին ՈԱԱԿ-ի հիմնադրմամբ, և այս միտումը մինչ այժմ ակտուալ է: Ըստ իրականացված 15 փորձնական հավատարմագրումների արդյունքների՝ ՈԱԱԿ-ի ստեղծումից հետո գործընթացում ներգրավված բոլոր համալսարանները սկսել են վերանայել որակի ապահովման իրենց մոտեցումները:



Գծապատկեր 1. Որակի ապահովման ձևավորումը ՄՈՒՀ-երում

Ինչպես ցույց տվեցին հոտազոտության արդյունքները, որակի ապահովման համակարգի ձևավորումը կարող է խիստ տարբեր լինել տարբեր ուսումնական հաստատություններում՝ կախված պատասխանատուների ընտրությունից, վերջացրած որակի ապահովման ցանցի ներդրումով: Այնուամենայնիվ, որակի ապահովման համակարգի ձևավորման տարբեր մոտեցումների արդյունավետությունը դեռ ենթական է ուսումնասիրման՝ հաշվի առնելով երևույթի նոր լինելը:



Գծապատկեր 2. ՈԱ կազմակերպումը ՄՈՒՀ-երում

ՈՒսումնասիրության ևս մեկ կևևոր արդյունք է որակի ապահովման՝ առաքելության և փաստերի վրա հիմնված մոտեցումը, որը խրախուսվում է նաև ՈԱԱԿ-ի կողմից: դիտարկելով իրականացված 15 փորձնական հավատարմագրումների արդյունքները՝ պարզ է դառնում, որ, շատ քիչ թվով ՄՈՒՀ-եր են գործունեություն ծավալում իրենց որդեգրած առաքելությանը համապատասխան: Հաճախ, առաքելությունը լինում է չափազանց հավակնոտ և ոչ չափելի և թույլ չի տալիս ՄՈՒՀ-ին անցնել առաքելության

Եզրակացություններ: հազիվ թե որևէ ուսումնական հաստատություն գործունեություն ծավալում իր որդեգրած առաքելության և ռազմավարական պլանի համապատասխան

Խորհրդատվություն: Վերապատրաստել ՄՈՒՀ-երի վարչական անձնակազմին ՄՈՒՀ-երի կառավարման օպտիմալ մոտեցումների վարեբարյալ

վրա հիմնված հավատարմագրում: Ընդ որում, փաստերի վրա հիմնված կառավարման գործընթացի վերաբերյալ հստակ տեսլականի բացակայության պատճառով գործընթացներում ներգրավված և ոչ մի ՄՈՒՀ չի կարողացել ներկայացնել անհրաժեշտ քաղաքականության վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես նաև իրենց կառավարման գործընթացներին նպաստող այլ անհրաժեշտ տվյալներ (Գծապատկեր 3) վերջին 5 տարիների համար: Սա, ըստ էության, մատնանշում է ՄՈՒՀ-երի կառավարման մոտեցումների վերանայման խիստ անհրաժեշտությունը: Ինչպես ներկայացված է հաջորդ գծապատկերում, հասանելի տվյալները, հիմնականում, վերաբերում են ուսանողների առաջադիմությանը և, որոշ չ

Փաստ. ՄՈՒՀ-երում դեռ անհրաժեշտ է զարգացնել կրթական գործընթացների կառավարման կարողությունները:
Խորհրդատվություն. Սա պետք է արվի փոփոխության գործընթացում ներգրավված բոլոր դերակատարների համապատասխան գիտելիքների ձևավորման (ի՞նչ պետք է արվի և ինչպե՞ս) և, այնուհետև, վերջիններիս՝ փոփոխությունների կառավարման կարողությունների զարգացման միջոցով:



Գծապատկեր 3. Տեղեկատվության առկա աղբյուրներ

Հաջորդ թիրախային կետը նպատակաուղղված էր սահմանելու ՄՈՒՀ-երի ռազմավարական պլանի մշակման և իրականացման կարողությունը: Ռազմավարական պլանավորման նախաձեռնությունը խորհրդային համակարգի փլուզումից հետո հայաստանյան առաջավոր

համալսարաններինն էր: Այսպիսով, որոշ համալսարաններ ռազմավարական պլանավորման 4 շրջափուլի պատմություն ունեն, և ինչպես ցույց տվեցին հետազոտության արդյունքները,ՄՈՒՀ-երի մեծ մասն ունի ռազմավարական պլան կամ պլանավորման համապատասխան փաստաթուղթ:



Գծապատկեր 4. ՄՈՒՀ-երի պլանավորման կարողություն

Այնուամենայնիվ, ինչպես հետազոտության և 15 փորձնական հավատարմագրման արդյունքները ցույց տվեցին, ՄՈՒՀ-երը դեռևս դժվարություններ ունեն ռազմավարական պլանների գործարկման հետ կապված: Եթե տվյալներն ուսումնասիրվում են հավատարմագրման պետական չափանիշների և որակի կառավարման սկզբունքի (Դեյմինգի պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում շրջափուլ) տեսանկյունից, ստացվում է ՄՈՒՀ-երի կառավարման (կամ կարող է այն բացակայել) հետաքրքիր պատկեր: Ինչպես կարելի է տեսնել գծապատկերում, ՄՈՒՀ-երի մեծ մասը (83%) իրականացնում է ռազմավարական պլանավորում, սակայն պլանավորված գործողությունների միայն փոքր տոկոսն (20%) է, ըստ էության, իրականացվում, երբ դիտարկվում են հավատարմագրման չափանիշներին համապատասխանության տեսանկյունից: Իրականացման վերաբերյալ կարելի է ասել, որ ՄՈՒՀ-երի մեծ մասը (94%) իրականացնում է այնպիսի գործընթացներ, որոնք ռազմավարական պլանում արտացոլված չեն: Դեռևս,

հազիվ թե որևէ ՄՈՒՀ (30%) կարողացել է ներկայացնել հավատարմագրման չափանիշներին համապատասխան իրականացված գործողությունների վերաբերյալ բավարար փաստեր: Որպես արդյունք, ըստ էության, կարելի է ներկայացնել վերևում նշված փաստերը:

Ինչ վերաբերում է իրականացված գործընթացների գնահատմանը (Ստուգում), առկա տվյալները ցույց են տալիս, որ կան չափմանորոշ գործիքներ դիտարկումների և հարցաշարերի տեսքով (45%), սակայն, գործիքներից շատ քչերն էին, ըստ էության, վերհանում կառավարման կոնկրետ ոլորտի մասին իրավիճակը, իսկ շատ քչերն էլ (15%) ներկայացնել են գնահատման վերաբերյալ փաստեր: :

Եվ վերջում, ձգտելով իրականացնել բարելավումներ հաստատության կառավարման տարբեր ոլորտներում, ՄՈՒՀ-երը ցուցաբերել էին փաստերի հիման վրա բարելավումների իրականացման, հետևաբար նաև հիմնավորված որոշումների կայացման կարողությունների շատ փոքր ցուցանիշ (30%): :

Ինչպես կարելի է տեսնել գծապատկերում, քիչ փաստեր կան բարելավումների մասին վկայող, որոնք առնչվում են նախորդ ռազմավարական պլանավորմանը: Ավելին, շատ քիչ փաստեր են առկա ըստ էության իրականացված բարելավումների մասին (15%): ՄՈՒհ-երը այսպիսի արդյունքը հիմնականում պատճառաբանում են ռեսուրսների սղությամբ : Շատ քչերն են խնդիրները կապում կառավարման մոտեցումների հետ: Այդուհանդերձ, Դեյմինգի որակի կառավարման շրջափուլն արտահայտող հետևյալ գծապատկերը, կարծես, Հայաստանի ՄՈՒՀ-երում ներդրված չէ: Այսպիսի արդյունքները նաև մատնանշում են, որ կառավարման վերին օղակը ավելի շատ շարունակում է առաջնորդվել ավանդույթ դարձած փորձով, քան պլանավորման, գնահատման և բարելավման սկզբունքներով: Այս վերաբերմունքի փոփոխությունը ենթադրում է կազմակերպական հիմնարար փոփոխություններ: Սա նաև հանդիսանում է ֆինանսական ռեսուրսների սխալ շահագործման և բաշխման նախազգուշական ազդակ, որը կարող է հանգեցնել կառավարման համակարգի անհավասարակշռության և արժեզրկման:



Գծապատկեր 5.Որակի կառավարում. առկա վիճակը

Որակի ապահովման գործընթացի կառավարման հաջողության հիմնական գրավականը որակի ապահովման գործընթացում տարբեր շահակիցների ներգրավումն է: Այսպիսով, հետազոտության հաջորդ կետն անդրադառնում է ՄՈՒՀ-երի տարբեր շահակիցների ներգրավվածությանը որակի ապահովման գործընթացներում: :

Նախնական դիտարկմամբ, ինչպես ցույց տվեցին իրականացված 4 փորձնական հավատարմագրումները, ՄՈՒՀ-երը միտված են որակի ապահովման պարտականությունները հանձնարարել մեկ անձի, ով իրականացնում է ինքնավերլուծությունը: Այսպիսի մոտեցումը հանգեցնում է հաստատության, ինչպես նաև տարբեր շահակիցների անտարբերությանը որակի ներքին ապահովման հարցում, , և, մասնավորապես, թերահավատությանը ուսումնական հաստատության կառավարման գործընթացում որակի ապահովման ունեցած դերի շուրջ: ՈԱԱԿ-ի կողմից իրականացված մի շարք աշխատաժողովներից և վերապատրաստումներից հետո՝ 2011թ.-ին գրանցվել են շահակիցների ներգրավվման հետևյալ արդյունքները (գծապատկեր 6): Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ ՄՈՒՀ-երը դեռևս պետք է հաղթահարեն բազմաթիվ մարտահրավերներ, որպեսզի ապահովեն այնպիսի կարևոր դերակատարների ակտիվ

ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացում, ինչպիսիք են գործատուները և շրջանավարտները: Նաև պետք է ձեռնարկվեն լուրջ քայլեր՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ինչպես նաև ՄՈՒՀ-ի այլ ստորաբաժանումների ներգարվվածությունն ապահովելու ուղղությամբ:



Գծապատկեր 6. Ներգրավվածություն որակի ապահովման աշխատանքներին

ՄՈՒՀ-ի որակի կառավարամանմեկ այլ կարևոր գործոն էորակի ապահովման աշխատանքներին տարբեր շահակիցների ներգրավումը: Սա հիմնականում կախված է գործընթացի իրականացման համար հիմնական պատասխանատուների փոփոխվող գիտելիքի աստիճանից (ինչ և ինչպիսի փոփոխություն): Այսպիսով, ստացված տվյալները ցույց են տալիս, որ կա խիստ անհրաժեշտություն ներդնելու բարձրագույն կրթության կառավարման նոր մեթոդներ և ձևեր ընդհանրապես, և որակի ապահովման՝ մասնավորապես: Հարցվածների մոտ 53%-ը ընդգծում է որակի ապահովման փիլիսոփայությունն առավել լավ հասկանալու անհրաժեշտությունը, ինչպես նաև գործիքների և մեխանիզմների իմացությունը, որոնք առավելագույնս կհամապատասխանեն իրենց առանձնահատուկ համատեքստին և կարիքներին:

Ինչ վերաբերում է համակարգում ձևավորված մշակույթի փոփոխմանը՝ պահանջները բավարարելու նպատակով, հետազոտության արդյունքները ցույց են տալիս (գծապատկեր 7), որ ուսումնական հաստատությունները կանգնած են կրթության որակի ապահովման մեխանիզմների կիրառման համապատասխան կարողությունների զարգացման անհրաժեշտության առաջ, ինչը իր հերթին պահանջում է վարքագծային փոփոխություններ՝ որակն ապահովելու նպատակով:՝



Գծապատկեր 7. Վարքագծային և առկա մշակույթի փոփոխման անհրաժեշտություն

Հետազոտության մեկ այլ կարևոր արդյունք (գծապատկեր 8) բացահայտում է, թե որքանով են ՈԱԱԿ-ի՝ որակի ապահովման մոտեցումները ներազդում ուսումնական հաստատությունների որակի ապահովման ուղղությամբ ծավալած գործունեության վրա:: Հարցվածների 45%-ը նշել է, որ ՈԱԱԿ-ի մոտեցումներն ուղղորդում են համալսարաններին՝ որակի ապահովման գործընթացների ձևավորման հարցում, մինչդեռ 32%-ը գտնում է, որ այդ մոտեցումների շնորհիվ ստեղծվել է ուսումնական համակարգ, որը բերում է զարգացման ու բարելավման:



Գծապատկեր 8՝ ՈԱԱԿ-ի ազդեցությունը որակի ապահովման համակարգի վրա

IV. Դասավանդման և ուսումնառության որակի ապահովում. առկա վիճակը

Դասավանդման և ուսումնառության որակի ապահովման վերաբերյալ տվյալները հիմնականում վերցված են 15 փորձնական հավատարմագրումներից, պրոֆեսորադասախոսական կազմի հետ անցկացված ֆոկուս խմբերի և ուսանողական շրջանում հարցումների արդյունքում: Հիմնական հետազոտություններն արվել են հետևյալ կետերի շուրջ՝

- Պետական կրթական չափորոշիչներ
- Դասավանդման և ուսումնառության մոտեցումներ
- Ուսանողների գնահատում
- Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի կիրառում:

Բացահայտված հիմնական արդյունքներից մեկը վերաբերում է պետական կրթական չափորոշիչների դերակատամանը ՀՀ մասնագիտական կրթության համակարգի հետագա զարգացման ուղղությամբ: Փորձարկմանը մասնակցած բոլոր ՄՈՒՀ-երը միաձայն նշեցին, որ իրենք սահմանափակված են՝ Կրթության և գիտության նախարարության կողմից պետական կրթական չափորոշիչների պարտադրման պատճառով:: Հիմնական դժգոհությունները կայանում էին նրանում, որ ՄՈՒՀ-երն այնքան ճկուն չեն, որպեսզի կառավարեն իրենց ուսումնական պլանները և/կամ

ձևավորեն պահանջված որակավորումները/ուսումնառության արդյունքները, որով կբավարարեն աշխատաշուկայի պահանջները: Փոխարենը, ուսուցման՝ ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցումը խթանելու փաստը նշվեց ՄՈՒՀ-երի մեծամասնության կողմից: Ինչպես ցույց տվեցին ֆոկուս խմբային քննարկումների արդյունքներն ու փորձնական հավատարմագրումները, ՄՈՒՀ-երը՝ հատկապես փորձարկմանը մասնակցած 12 հաստատությունները, որոշ քայլեր են կատարել ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցմանն անցնելու ուղղությամբ, այնուամենայնիվ, դեռևս առկա են ՄՈՒՀ-երի զարգացմանը խոչընդոտող որոշ շոշափելի գործոններ՝ որակավորմումների ազգային շրջանակ, կրթական ծրագրի համար չափելի և իրագործելի ուսումնառության արդյունքներ սահմանելու բարդություններ:

Մեկ այլ լուրջ խնդիր վերաբերում է յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի ուղղությամբ համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակմանը: Ինչպես ցույց տվեցին փորձնական հավատարմագրման ընթացքում արված դիտարկումները, այն սակավաթիվ փորձերը, որոնք ուղղված էին ուսանողակենտրոն դասավանդման և ուսումնառության մեթոդների ձևավորմանը, ձախողվեցին, քանի որ դասախոսները շարունակում էին դասավանդել այն ձևով, որին սովոր էին տարիներ շարունակ: Այս եզրակացությունը հիմնված է “Ուսանողության ձայն”-ի կողմից իրականացված հարցման արդյունքների վրա, որում ասվում էր, որ դասախոսները հիմնականում դեռ շարունակում են պահպանել ավանդական դասախոսությունները, ինչն, ըստ էության, օտարում է ուսանողներին իրական ուսումնառության գործընթացից: Սա, ըստ էության, մատնանշում էպրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման, ինչպես նաև կարողությունների ձևավորման ուղղությամբ ներդրումներ կատարելու անհրաժեշտությունը՝ նրանց ներգրավելով ուսումնառության արդյունքների , ինչպես նաև համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակմանը և իրագործմանը:

Ներկայումս ուսանողների գնահատումը ՄՈՒՀ-երի համար մեկ այլ կարևոր խնդիր է: Ինչպես ցույց տվեցին փորձնական հավատարմագրումներն ու ուսանողների շրջանում իրականացված հարցումները, քիչ թվով ՄՈՒՀ-եր ունեն ուսանողների գնահատման համակարգի ամբողջական և ճշգրիտ նկարագրություն, և էլ ավելի քչերն են սահմանել այն տրամաբանությունը, որի վրա կառուցված է իրենց գնահատման համակարգը: Սովորաբար գնահատման համակարգը ծառայում է հետևյալ նպատակներին՝ ուսումնառության գնահատում և ուսումնառության համար գնահատում (assessment for learning), մինչդեռ գնահատման մեթոդները հետևյալն են՝ ամփոփիչ, հայտորոշիչ և ձևավորող : Փորձնական հավատարմագրում անցած ՄՈՒՀ-երից և ոչ մեկը հայտորոշիչ գնահատման որևէ տվյալ չտրամադրեց: Որոշ չափով կիրառվել է ձևավորող գնահատման համակարգը: Այնուամենայնիվ, ձևավորող գնահատման համակարգի առավել խորքային ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-երը շարունակում են կիրառել ավանդական ամփոփիչ գնահատման մեթոդը՝ չնայած պնդում են, որ անցում են կատարել ձևավորող գնահատմանը: Այսպիսով, գնահատման համակարգը ուսանողների ուսումնառությանը նպաստելու փոխարեն, ինչպես ցույց տվեցին ուսանողության շրջանում անցկացված հարցումները, խթանում է ուսանողների ՛՛պիտակավորմանը՛՛, քան ուսումնառության բարելավմանը: Իրականում կիրառվում է ուսանողների գնահատման միևնույն ամփոփիչ մեթոդը՝ ներառելով ձևավորող գնահատման մեթոդի որոշ տարրեր, ինչի արդյունքում գնահատման համակարգը չի բաժանվում որոշակի փուլերի և բաղադրիչների՝ կիսամյակի ընթացքում գնահատումն իրականացնելու համար: Վերջնական գնահատականը ձևավորվում է ամփոփիչ քննության և գնահատման տարբեր բաղադրիչների միջին որակավորման գնահատականից (ուսանողի հաճախելիություն, տեսական և գործնական պարապմունքներ, կուրսային աշխատանքներ և այլն):

Մեկ այլ խնդիր է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի կիրառումը, որն առաջ է բերում բազմաթիվ բանավեճեր շահակիցների շրջանում: 2006-2007թթ. ուսումնական տարում «Կրեդիտային համակարգի կիրառման մասին » կառավարության հատուկ որոշմամբ (2005թ.) Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը ներկայացվեց բոլոր ԲՈՒՀ-երին: Այնուամենայնիվ, կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը տարբեր ձևով ընկալվեց և մեկնաբանվեց ուսանողների և դասախոսների կողմից: Ինչպես ցույց են տալիս ուսանողության շրջանում իրականացված հարցումները ,

ուսանողները հիմնականում (36.8%) ընդունում են այն որպես ուսանողների գնահատման համակարգ: Ուսանողների 21%-ը պատասխանել է, որ գաղափար չունի՝ ինչին է այն ծառայում, և ուսանողների միայն 9.9%-ն է փորձել տալ Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի նպատակների մոտավոր սահմանումը: Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի դրական կողմերի վերաբերյալ հարցմանը ուսանողների 27.6%-ը պատասխանեց, որ այն օգնում է իրենց ստանալ գնահատական, 24%-ն ասաց, որ այն նպաստում է ուսանողների անաչառ գնահատմանը, 16%-ն արձագանքեց, որ այն խթանում է ուսանողների ուսումնառությանը և միայն 5.8%-ն մոտեցավ Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի

Փաստ. Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը տարբեր ձևով է ընկալվում և մեկնաբանվում ուսանողների և դասախոսների կողմից

Խորհրդատվություն. Վերանալել կրեդիտային համակարգի ձևավորման մոտեցումները՝ հաշվի առնելով դրա երկու հիմնական գործառույթները՝ կրեդիտների փոխանցումն ու կուտակումը՝ այսպիսով ձևավորելով համապատասխան օրենսդրական դաշտ, որը կխթանի դրա իրականացմանը:

նպատակներին՝ ասելով, որ այն նպաստում է ուսանողության անկախությանը:

Ավելին, իրավական դաշտի սահմանափակումների հետևանքով՝ Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը ներկայումս չի կարող ծառայել իր երկու գլխավոր նպատակներին՝ կրեդիտների կուտակմանը և փոխանցմանը: Կրեդիտների փոխանցումը դեռևս խնդրահարույց է նույնիսկ միևնույն համալսարանի ֆակուլտետների միջև: Այսպիսով, անհրաժեշտ են հետագա զարգացումներ՝ Կրեդիտների

կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի լիարժեք գործունեության համար, այնպես, որ այն ծառայի իր երկու հիմնական նպատակների իրագործմանը:

ՄՈՒՀ-երի տեսակները	Թիրախային ՄՈՒՀ-երի թիվը	Ուղարկված հարցաթերթերի թիվը	Պատասխանողների թիվը	Պատասխանողների տոկոսը (%)
Պետական	28	28	19	67%
Մասնավոր	75	75	25	33%
Միջկառավարական	4	4	4	100%
Քոլեջներ	88	88	20	22%
Ընդամենը				

2010-11թթ.-ին ՀՀ բոլոր ՄՈՒՀ-երը լրացրել են հարցաթերթիկ՝ որակի ապահովման առկա վիճակի վերաբերյալ: Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է թիրախային խումբը և պատասխանողների հարաբերակցությունը:


SHIRAK
LORI
TAVUSH
KOTAYK
ARAGATSOTN
YEREVAN
GEGHARKUNIK
ARARAT
VAYOTS DZOR
SYUNIK
YEREVAN
PRIVATE TLIs
INTERGOVERNMENTAL TLIs
PUBLIC TLIs
VOCATIONAL EDUUCATIONAL INSTITUTIONS